ուաքեաց առ վարդապետն բանս սպառնա-
կանս եւ յանդիմանութեան, թէ Ելցես յեր-
կրէս մերմէ եւ գնասցես յերկիր քո, ուստի
եկեալ ես, զի ոչ է պիտոյ մեզ խաբեբայ եւ
նորահանուկ քարոզութիւն քո եւ ոչ կեղծա-
ւոր վարքն քո, ապա թէ ոչ առակ նշաւակի
եւ այպն կատականաց լինիցիս ի ձեռս իմ»
(Դաւր. 272)։ Բայց եւ այնպէս մնաց վարդա-
պետն իւր դիրքին մէջ հաստատուն, չընկրկե-
ցաւ իւր ճանապարհին վրայ, «այլ հանապազ
չրջէր եւ քարոզէր, չինէր զեկեղեցիս եւ յար-
դարէր զամենեսեան ուղիղ կարգօք եւ սահ-
մանադրութեամբ»։

Դժբախտաբար Դաւրիժեցի չի տար ժա-
մանակագրական կռուաններ Պօղոս վարդա-
պետի կեանքէն, թէ ե՞րբ եկաւ նա արեւե-
լեան Հայաստան, ի՞նչ գծով եւ ո՞ր ժամա-
նակներու մէջ ընթացաւ անիկա իւր չինարա-
բական եւ քարոզչական ճանապարհը։ Առանց
տարակուսի անոր գործունէութեան առաջին
եւ երկրորդ շրջանները պէտք է զետեղել
1604—1615 տարիներու մէջ։ Այժմ վերադար-
ձած էր արդէն Մովսէս վարդապետ Սիւնիք
եւ աջակից եղած Պօղոս վարդապետին իր
առաքելական գործունէութեան մէջ։

1615ին Հօշանց անապատի բացման հան-
դիսին ներկայ էր նաեւ Պօղոս վարդապետ։
Ինչպէս Ներսէս Մակոցի եւ Գրիգոր Դարա-
նաղցի կը պատմեն, երբ Սարգիս եպիսկոպոս
եւ տէր Կիրակոս հիմնարկեցին Մեծ Անա-
պատը, այցելեց Պօղոս վարդապետ նորակա-